Ռամպալը, միջազգային կապերի դեպարտամենտի ղեկավար Ժան-Իվ Աստրյուկը: Քննարկվեցին համագործակցության ծրագրերը և հեռանկարները: Մասնավորապես նշվեց, որ 2012 թ. երկու մարզերի միջև կնքված համագործակցության եռամյա հուշագրի գերակա ուղղություններն են եղել գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, ֆրանկոֆոնիան, իսկ 2015 թ. Լոռու մարզկենտրոն Վանաձորում կնքված նոր հուշագիրը երկու տարածաշրջանների բարեկամական ջերմ հարաբերությունները հետագայում փորձագետների են այցելել Լոռու մարզ՝ Դեբեդ գետի վրա ռաֆթինգ սպորտաձևի հնարավորությունները գնահատելու:

Այդուհանդերձ, Ռենո Մյուզելիեն առաջարկեց համագործակցության արդեն հաստատված երեք ուղղություններին՝ պատմական տուրիզմի զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացում, ձեռնարկությունների միջազգայնացում, ավելացնել տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացումը և ակտիվ մասնակցություն «Միջերկրականի ապագան» խորագրով: Ֆորումի մասնակիցների թվում էին Արթուր Նալբանդյանը, Լևոն Ասլանյանը, Մարսելում ՀՀ հյուպատոս Ռուբեն Խարազյանը: Ֆորումում ելույթ ունեցան Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Իվ Լյո Դրիոնը, Մոնակոյի Արքայազն Ալբերտ 2-րդը և ուրիշներ:

Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

Հանդիպում մարզի ղեկավարի հետ՝ բարեգործական շարժառիթով

Նոյեմբերի 24-ին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին հանդիպելու ցանկություն էին հայտնել Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցի աշակերտական խորհրդի մի խումբ անդամներ: Հանդիպման առիթը առողջական լուրջ խնդիր ունեցող վանաձորցի փոքրիկ Արեգին օգնություն ցուցաբերելն էր:

Աշակերտական խորհրդի անդամներն ու մանկավարժները մարզի ղեկավարին պատմեցին «Խաչվող ուղիներ» ՍՅԿ-ի կողմից հայտարարված ամենամյա «Բարին արա» կամավորական ակցիայի շրջանակներում իրենց՝ «Սիրո և բարության կանթեղ՝ Արեգի համար» նախաձեռնության մասին:

Փոքրիկ Արեգի հիվանդության պատմությանը ծանոթանալուց հետո Գրիբոյեդովի անվան ավագ դպրոցն անհապաղ գործի է անցել՝ երեխայի բուժման ծախսերը հոգալու: Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանգանակություն, շրջիկ արկղով դրամահավաքին մեծ սիրով մասնակցել են և աշակերտներն ու մանկավարժները, և բազմաթիվ ծնողներ: Մարդասիրական նախաձեռնությանը լայն արձագանք հաղորդելու նպատակով նաև ստեղծվել ու սոցիալական ցանցում տարածվել է քարոզչական տեսահոլովակ՝ երեխայի հիվանդության պատմության ու ձեռնարկված մարդասիրական միջոցառումների վերաբերյալ:

Բացի այդ շուտով կազմակերպվելու է աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք, իսկ նոյեմբերի 30-ին՝ ժամը 12-ին, Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու դահլիճում ամփոփիչ համերգ-նվիրվատվություն՝ փոքրիկ Արեգին և նրա ընտանիքին աջակցելու համար:

Մարզի ղեկավարը բարձր գնահատեց ու խրախուսեց նրանց մարդասիրական նախաձեռնությունը և պատրաստակամություն հայտնեց անձնական մասնակցություն ունենալ կարիքավոր մանկան բուժման նպատակով կատարվող դրամահավաքին:

Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին